«ՔԵԶ ՀԱՎՆԵՅԱ, ՓՈԼ»



ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՂԻՆ արդեն ծանոթ է ամերիկահայ լուսանկարիչ Փոլ Գալինյանի անունը՝ իր հեղինակած «Վիլյամ Սարոյան. մարդը, գրողը» վավերագրական ֆիլմի յուցադրումը գովազդից: Երեկ ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության շենքում լրագրողների հետ Գալինյանի հանդիպման նպատակն էլ հենց ֆիլմի ստեղծման մասին պատմելն էր:

Փոլ Գալինյանն առաջին անգամ Սարոյանին հանդիպել է 1976թ. մարտի 26-ին, քանդակագործ Վարազ Սամվելյանի արվեստանոցում: «Լուսանկարչական սարքերը տեղավորել էի արվեստանոցում, ես էլ թաքնվել քանդակների ետեւում: Հանկարծ Սարոյանը նկատեց ինձ: Սրիպված էի դուրս գալ եւ հայտնել մտադրությանս մասին: Անմիջապես պատասխանեց. «Կորսվե՛ այստեղեն, դու ո՞վ ես»: Սարոյանին տհաճ էին լուսանկարիչները. կարծում էր մամուլի համար եմ լուսանկարում: Հետո առաջարկեց երգել «Կիլիկիան»: Միասին երգեցինք: Հուզվեց: Աչքերի մեջ արցունքներ երեւացին: Եվ ասաց. «Քեզ հավնեցա, Փոլ, հիմա ուզածիդ չափ կրնաս նկարս քաշել»: Այդպիսին էր մեր առաջին հանդիպումը»:

Ֆիլմի նկարահանման աշխատանքներն ավարտվել են 1991-ին, դրանք տեւել են 8 տարի: «Ֆիլմի առաջին յուցադրումը ուզում էինք Հայաստանում լիներ, եւ պայմանավորվածություն ունեինք ՀՀ կառավարության հետ: Գալու համար արդեն բոլոր փաստաթղթերը պատրաստ էին: Միայն վերջին պահին Հայաստանից տեղեկացրին, որ քաղաքական իրավիճակը փոխվել է եւ ձեր գալը չեղյալ է համարվել»: Ֆիլմն առաջին անգամ յուցադրվել է Ֆրեզնոյի «Վիլյամ Սարոյան» թատրոնում եւ ապա՝ 15 երկրների շուրջ 60 քաղաքներում:

«Վիլյամ Սարոյան. մարդը, գրողը» ֆիլմի դիտումը եւ հանդիպումը կինոնկարի հեղինակ Փոլ Գալինյանի հետ տեղի կունենա սեպտեմբերի 17-ին, «Մոսկվա» կինոթատրոնում: Երեւանցիները կարող են նկարը դիտել մինչեւ սեպտեմբերի 21-ը:

Ֆիլմն արժանացել է միջազգային մի շարք կինոփառատոների մրցանակների:

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ